

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

12-րդ դասարան

1. Ասույթի հեղինակը ամենայն հայոց բանաստեղծն է՝ Հովհաննես Թումանյանը: Ասույթը բնութագրում է XX դարի հայ գրականության ամենաքնարական բանաստեղծին՝ աշնան ու թախիծի անկրկնելի երգչին՝ Վահան Տերյանին: Տերյանը գրականություն մտավ շոնդալից և «օղբ լցվեց Տերյանով», եկավ «Տերյանի հագարը», արձանագրեցին նրա ավագ գրչեղբայրները՝ հաստատելով. «Հրաշքը կատարվել էր. Վահանը գտել էր իրեն և արվեստի գաղտնիքը»: Նրա առաջին ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջներ»-ը, դարձավ ամենասիրված ու փնտրված գիրքը, և առասպելական մշուշ է ստեղծվում բանաստեղծի շուրջ, երիտասարդությունը անվերապահ սիրահարվեց բանաստեղծին: Ահա այսպիսի շոնդալից մուտք է ունեցել անգուգական Տերյանը: Բայց ճակատագիրը դաժան էր նրա նկատմամբ. վաղամեռիկ բանաստեղծը իր մահկանացուն կնքում է հեռավոր Օրենբուրգում, հեռու իր հայրենի եզերքից, հարազատներից, «պոետ մի անտեր ու անտուն», առանց բժշկի, ցրտի ու ծխի մեջ... Հարազատ եզերքում ուշ իմացան այդ հոգևոր ծանր աղետի՝ մեծ բանաստեղծի մահվան մասին: «Մշակը» 1920 թվականի մարտի 7-ին տպագրեց մի սառն երկտող: Լռեցին թերթերը, կառավարությունը, դրության տերերը: Իր սիրելի ուսուցչի մահվան բոթը խորապես ցնցեց ամենահարազատին ու բուն ժառանգորդին՝ Եղիշե Չարենցին: Անամոք կսկիծով 1920 թվականի մայիսի 16-ին նա գրեց իր նշանավոր շարքը՝ «Վահան Տերյանի հիշատակին»՝ շաղախված անծիր տխրությամբ ու կարոտի մշուշով.

Վահան՝ Տերյան, ինչպե՞ս երգեմ հիշատակը քո.

Թող լուռ փռվի հիմա իմ դեմ անլույս երեկո,

Մրտիս վրա իջնի թող մութ մի ամպի քուլա,

Քամին բերե թող մահվան բոթ, ու անձրևը լա:

.....

.....Ո՛րք, մենակ կգաս դու և կերգես քո սերը,

Որ վերջի՛ն մեր սերն է աշխարհում գուցե: Մնացյալը՝ մասնակիցը:

2. Տարբեր ժամանակներում հայության խոշոր հատվածներ հեռացել են իրենց հայրենիքից և ապաստանել օտար երկրներում: Որտեղ էլ հայտնվել է տարագիր հայը՝ նախ՝ ստեղծել է դպրոցներ, արարել աղոթատեղիներ ու եկեղեցիներ, տպագրել թերթ ու գիրք՝ պահպանելու համար իր ինքնությունը, իր լեզուն ու մշակույթը: Իսկ 1915-ի ցեղասպանությունից հետո ձևավորվեց հայկական Սփյուռքը:

1908-ին հեռավոր Ֆրեզնոյում՝ բիթլիսցի Արմենակի ու Թագուհու ընտանիքում ծնվեց Վիլյամ Սարոյանը՝ «Գրչի Թագավորը(Հակոբ Կարապենց), որը ոչ միայն հայությանը ճանաչում պարգևեց ժողովուրդների այս հոծ խառնարանում, այլև Ֆրեզնոյի անունը դրեց քարտեզի վրա, իսկ Հայաստանի մարմինն ու ոգին դրոշմեց համաշխարհային գիտակցության անջնջելի պաստառի վրա» (Հակոբ Կարապենց): Սարոյանը չի ուսանել համալսարաններում. «Իմ իսկական դպրոցը եղած է փողոցը», ունեցել է թալանված մանկություն ու պատանեկություն. եղել է կանաչի վաճառող, հեռագրատան ցրիչ... Նա ապրել է հայկական միջավայրում, լսել է Բիթլիսի լեզուն, այդ լեզվով թոթովել առաջին բառերը, նրա համար հայությունը ապավեն էր, և ինքը արտացոլումն էր հայության: «Նա իր հայությունը կրեց թագի պես»՝ ազդարարելով իր դավանանքը՝ « Ուր որ կերթաս՝ պտռա Հայաստան»: Նա գրեց անգլերեն, թարգմանվեց 38 լեզուներով, դարձավ գրական տիտան, ԱՄՆ- ի ամենաճանաչված ու կարդացվող գրողը, բայց մնաց հայ, որովհետև համոզված էր, որ «Եթե իմ գործը չի բարեփոխել աշխարհն ու նրա բնակիչներին, ապա գոնե դեպի վատը չի տարել մարդկանց»: Իր բազմաթիվ գործերի մեջ Սարոյանը անդրադարձել է հայության ճակատագրին, գտել է իր արմատները, ապրել հայի անպարտելի կամքով ու արարելու հանճարով: Հանճարեղ գրողը համոզված է, որ եթե «Հայաստան չկա, պարոններ՝ ը, Ամերիկա ալ չկա, Անգլիա ալ չկա, Ֆրանսա ալ չկա, Իտալիա ալ չկամ, միայն աշխարհը կա, պարոններ՝ ը»: Եվ ապա զայրույթով բացականչում է. «Աշխատեցեք կործանել այս ցեղը: Ենթադրենք, որ դարձյալ 1915 – ն է... Տեսեք, որ ցեղը դարձյալ պիտի չապրի՞, երբ անոնցմե երկուքը քսան տարի հետո հանդիպեն գարեջրատան մեջ ու խոսին իրենց մայրենի լեզվով»: Սարոյանի ահեղի ժառանգության մեջ չենք գտնի մի ստեղծագործություն, որ շաղախված չլինի հայկականությամբ, որովհետև «ոգին, որ մղում է նրան գրելու հայկական է»: Նա գրականություն մտավ միանգամից, ձեռք բերեց գրական ճանաչում: Նա ամենուր որոնեց հայն հայ հայրենիքը: «Իմ անձը աշխարհի վրա» առաջին գործերից մեկում նա իր ծագումնաբանության մասին այսպես է գրում. «Իմ վերևս, այս պզտիկ, խառնշտկված սենյակին պատին վրա կա իմ մեռած հորս լուսանկարը, և ես աճած եմ իր դեմքով, իր աչքերով և անգլիերենով գրելու վրա եմ այն, ինչ որ պիտի ան գրեր մեր բնիկ լեզվով... Կ՝ ուզեմ ձեզի ցույց տալ, թե ես ու հայրս նույն մարդն ենք»: Հայերի մասին են «Հայը և հայը», «Ուզենք- չուզենք հայ ենք», «Իմանունը Արամ է», «Իմ սիրտը լեռներում է», «Գեղեցիկ սպիտակ ձիու ամառը», «Մարդկային կատակերգություն»: Այս վերջինը Սարոյանը նվիրել է իր մորը՝ Թագուհի Սարոյանին՝ համոզված, որ մի օր կթարգմանվի հայերեն , և մայրը կկարդա իրենց ընտանիքի պատմությունը: Նրա բոլոր գործերը պարզ ու անկեղծ պատմություններ են սիրո, եղբայրության, գթասրտության մասին. նա խոսում է բոլոր նրանց անունից, ովքեր միայնակ են, լքված, ովքեր պարտվել են կյանքում, բայց սիրում են կյանքը, հրաշալի է այն բարոյախոսությունը, որ մայրը պատգամում է որդուն որպես առաքինի ապրելու օրենք. «Ինչ փորձիր հասկանալ, փորձիր սիրել քեզ հանդիպած բոլոր մարդկանց... Բարին երբեք չի վերջանում: Եթե վերջանար՝ աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա»: Սարոյանի սրեղծագործության մեջ

հիմնավոր տեղ ունի հայկական կյանքը: Նրա հերոսները իրենց պահվածքով դրսևորում են ազգային ու մարդկային բնավորության ուշագրավ կողմեր՝ «Կոտրած անիվ», «Հայաստանի Անդրանիկը», «Բիրթիս», «Գյուղացին», «Հայ գրողներ» և այլն:

3. «Պոեզիան բանաստեղծություն է և պոեզիայի մեջ մեծ են դառնում նրանք, ովքեր գալիս են խորհրդանիշների, պատկերների, բառի, շեշտի իրենց համալիրով, իրենց այբուբենով» (Հրանտ Մաթևոսյան): Ահա իր խորհրդանիշներով, իր բառով ու շեշտով գրականություն մտավ «Համո Ոսկեբերան Սահյան» (Հ. Մաթևոսյան) բանաստեղծը: Նա գրականություն մտավ «ընտրաբանելու խորհուրդը հասկի», երգելու չքնաղ անտառի հեքիաթը, իրիկնամուտի մարմրուն գույները, երգելու այն ատվի հրաշքը, որը սիրածի ստվերն է տանում ջաղացպանի աղջկան, երգելու քարափի քարեղեն ողջույնը՝ ըստ սահնամված կարգի: Նա երգել է ծիածաններ, ջրվեժներ, քարեր, ծառեր՝ այդպես խոսելով իրականության հետ: Իր հրաշալի բանաստեղծություններում նա ընդգծում է մարդու և բնության անքակտելի կապը, նա գնում է ձուլվելու այն բնությանը, որը ծնել ու սնել է իրեն. «Ինձ մի հին կոճղի փչակում դրեք...

Որ գնամ գտնեմ արմատը նրա,

Որ գնամ նրա արմատը գրկեմ ... »

Բնությունը Սահյանի ստեղծագործության բանալին է, հողը, զինանոցը: Նրա երգերում ապրում են մասրենու թուփը, ծառն ու ծաղիկը, քերծն ու քարափը, և նա այս ամենի մեջ է, այս ամենով է հարստանում նաև ընթերցողը: Սահյանի բնապատկերները անձնավորման հրաշալի օրինակներ են՝ շնչավոր, թրթռուն, գունազարդ ու բուրումնալից: Իր մի բանաստեղծության մեջ Սահյանն իրեն անվանել է «Քարափների դեսպան», այո՛, իսկ և իսկ դեսպան, որ հաշտեցնում է բնությանը, մարդուն և բանաստեղծությանը, և ծնվում է անկրկնելին՝ «Նոր խոհերի, ձյունների տակ նոր խոսքի Չնձաղիկներ եմ գտնում»: Սահյանը իր բազմաթիվ բանաստեղծություններում առարկայացնում է բնությունը իր բազմաթիվ բաղադրիչներով՝ անընդհատ փոփոխելով ծառը, քարը, քամին, ամպրոպը, քարափը, առուն ու գետը: Նա ձայնագրում ու կենդանացնում է բնության ամեն շարժում ու շունչ, հևք ու հառաչանք, ու բնաշխարհը կենդանանում է մարդկանցով, բուսականությամբ՝ քարայծիվազքը, հորթի բառաչը, լորի թոփչքը, արտույտի երգը: Եվ ստեղծվում է բնաշխարհի երգը՝ մարդու և բնության հավերժական գրույցը: Բնությունը Սահյանի համար բաց գիրք է՝ «Անտառում»: Անտառը չի քնում, որովհետև աշնան քամու օրորի մեջ նաև տազնապ կա (փայտահատի կացինը), իսկ ինքը պետք է փայփայի «եղնիկի ձագին», «տապավոդ կաղնու խուլ հառաչանքը» պետք է դառնա նորոգ երգ: Բնությունը պետք է լսի քարափների հավերժական երգը, պետք է պահի «Տերևի ականջի օղը», որ վաղորդյան ցողն էր և շատ էր սագում տերևին: Մա պատկեր- քանդակ է, հույզ, հիացում ... Եվ երբ մթնում է օրը, և բակում լսվում է Ծաղիկ եզան զանգի ծլնոցը, մեզ թվում է՝ «նինջ մտնող ամառային վաստակած օրը» իր չընդհատվող գրույցն է սկսելու իրեն արարող գեղջկական գերդաստանի հետ՝ հավերժորեն նորոգելով մարդու և բնության անքակտելի կապը: Իրավացի էր

Մահյանի մտերիմ գրչեղբայր Գուրգեն Մահարին, երբ գրում էր. «Նրա գրչի տակ շունչ են առնում բնության երևույթները, դառնում են անգամ բնավորություններ ու կերպարներ»: Որևէ վերլուծություն(2 բանաստեղծության) պիտի կատարի մասնակիցը:

4. Հրանտ Մաթևոսյանը գրականություն մտավ միանգամից, նվաճեց միայն իրեն պատկանող այն աշխարհը, որն այնուհետև պիտի կոչվեր մաթևոսյանական: Նրա առաջին իսկ ակնարկներում զգացվում է նուրբ դիտողականություն, նյութի մատուցման արտակարգ հանդարտություն: Մաթևոսյանի զարմանալի տաղանդի շքեղ ապացույցներից է «Աշնան արև» ասք- վիպակը: Այս վիպակը լույս է տեսել 1966-ին «Երկրի ջիղը» վերնագրով, ապա ռուսերեն՝ «Մայրը գնում է որդուն մուսնացնելու»: Վերջին վերնագիրը պարզ է ու հասկանալի: Վիպակի հերոսուհին իրոք օժիտ է տանում ամուսնացող որդուն տնավորելու համար, և նրա բոլոր գործողությունները պտտվում են այս մտքի շուրջ: Իսկ առաջին վերնագիրը բացահայտում է մեծ աշխարհում իր փոքրիկ անկյունը գտած և մաքառումով, անմոռունջ աշխատանքով իր ինքնահաստատումը գտած կնոջ կերպարը, որը բոլորովին նորություն էր մեր գրականության մեջ: «Աշնան արև» հիրավի գտնված վերնագիրը բացահայտում է իր կյանքի աշունն ապրող կնոջ կերպարը, որ ի մի է բերում իր ապրած կյանքը՝ լի մաքառումներով, դառնություններով, աննշմար ուրախություններով ու անկարելի զոհողություններով: Որքան էլ տխուր, բայց հյուսվում է մի հրաշալի ասք՝ կյանքին հաղթելու, ինքնահաստատվելու, ինքնագնահատվելու մասին: Վիպակի հերոսուհին մանկուց ճաշակել է որբության դառնությունը, նա չի հիշում զոնե մեկ լուսավոր օր իր 16-ամյա կյանքի ընթացքում: Հետո ամուսնացնում են՝ առանց իր կամքը հարցնելու, անսեր. «Հողի տակ հանգիստ չունենա քո պապ Իշխանը. աշխարհը լիքը տղա՝ գնա, Աղունիկ, Սիմոնից մարդ սարքիր, զոմից տուն սարքիր, Արմենակից Արմենակ սարքիր...»: Ծմակուտում նրան ընդունում են արհամարհանքով, ծաղրում են ու հալածում, իսկ «քո էդ լավ հերը բերանը ծուռ կանգնած էր մոտները: Անունս Աղուն չէր, առնաուտ քուրդ էր, շատ-շատ էի ուտում նրանց չեղած հացը»: Ծանր հիշողությունները մղկատացնում են արդեն ամեն ինչի իր ստեղծարար աշխատանքով ու անկոտրում կամքով հասած Աղունին: Նա վերջապես հնարավորություն ունի սկեսրոջը «պայտելու», փոխադարձելու տարիների մեջստացած իր վիրավորանքները: Անցյալն ու ներկան միահյուսվում են: Մարտնչող Աղունի հոգու մի անկյունում նվում է սիրո ծարավը. միայն Չորագեսի լուսավոր կայարանում է նա «սիրո պես մի բան զգացել», իսկ մյուս դեպքերում՝ «սերը մեր ցեղում չկա», «մեր ցեղը գործ է ամում, լպստվելու ժամանակ չունի», «հետո էլ՝ տղեղ էր սիրո արժանի լինելու»: Ահավոր ծանր խոստովանություն: Սա ապացույցն է սիրո կարոտի, սիրված լինելու ցանկության: Նա գնահատում է իր անսահման աշխատող ամուսնուն՝ «Սիմոնը ճղատվում էր կոլխոզի ու տան արանքում», բայց նա էլ չէր դիմանում «ռեալիստ» Աղունի ամենօրյա պարսավանքին և «ծեծում էր նրան, այդ տան ամեն իրը ստեղծվել է ծեծվելու գնով...»: Իր ապրած տառապանքից, դժվար կյանքից

սկսվում է հաշտ ու խաղաղ հարս-սկեսուրային հարաբերության մի բաղձալի կարոտ, և նա , ի հեճուկս սկեսրոջ, սկսում է գովաբանել իր և դեռևս չտեսած հարսի հարաբերությունը, քանի որ Արմենակի կազմելիք ընտանիքը իր նվաճումն էր լինելու, իր չարչարանքի գինը: Մինչդեռ Միմոնը, որ ամբողջ կյանքում տարել է Ադունի ըմբոստ բնավորության հարձակումները, պատվիրում է Ադունին՝ փոխանցելու որդուն, «զագսի հարցում չշտապի»: Նա որդու ուզում է հեռու պահել իր կաշկանդվածությունից ու անգորությունից, չնայած ամեն վայրկյան համոզվում է, որ «թեև մեծ իրավացին ինքն է, բայց փաստացի ճիշտը Ադունն է»: Բարի՛, բարի՛ ու անկամ է Միմոնը. աշխատում է բոլորի համար, «իսկ վարձը՝ էգուց, եկող տարի, երբեք: Ամբողջ աշխարհը Միմոնին պարտք է» : Միրած աղջկան հարս են տանում, նա լաց է լինում. «Նանի, Ծովինարը սիրուն էր, չէ՞» , իր ծեծված կողերը ցույց տվող Ադունին, որ իր պաշտպանությունն էր աղերսում, հազիվ շնջում է. « Դե բա ես ինչ անեմ»: Միշտ բարի ու սրամիտ Միմոնին այդ գորշությունից ու դինջությունից հանում է Ադունը, և նա ընդունակ է դառնում անգամ կատաղելու, գժվելու. «լինգը վրա բերեց նրան, նրա Արեստի որդուն, խփեց կոտրեց նրանց շան մեջքը...»: Եվ այստեղ «Ադունը տեսավ, որ սիրում է Միմոնին և լաց եղավ նրա համար ու իր համար»: Միմոնի կատարած մի բարոյական շեղումը նրան դարձնում է ծաղրի առարկա. Ադունը նրան հայտարարում է հանրային ամուսին, բայց միևնույն ժամանակ նա նախանձում է սիրուն Մոնային, որ կարողացել է Միմոնին սիրել սովորեցնել, և ինքն էլ է սկսում նոր ճաշատեսակներ եփել՝ ակնկալելով նրա սերը:

Վիպակի վերջին տողերը ամբողջացնում են անձիր տխրության ու թախծի մեջ, կամա- ակամա տառապանքին ընտելացած Միմոնի կերպարը. նա օրորվում է իր ասելիքը մինչև վերջ ասել- չասելու մեջ: Ադունի կերպարի ամենաընդգծված հատկանիշը հոգատարությունն է ամուսնու, զավակների, միջավայրի նկատմամբ: Հենց դրա համար է Ադունը սիրված գյուղում՝ չնայած իր խայթող ու սուր լեզվին: Ադունի կերպարը դառնում է բոլոր կերպարների բացահայտման բանալին, որովհետև նա ճշմարտորեն ներկայացնում է նրանցից յուրաքանչյուրի բնավորությունն ու ապրելու կերպը: Ադունն ու Միմոնը նույնանում են անսահման աշխատասիրությամբ, երեխաների նկատմամբ հոգատարությամբ, էաքուն պահված, բայց անսահման ներողամտությամբ,, հարազատության զգացողությամբ:

Այս վիպակում Հրանտ Մաթևոսյանը հյուսել է սիրո, աշխատանքի, բնության այն հրաշալի վիպերգը, որ հնչել է մեզինից շատ առաջ, հնչում է հիմա և պիտի հնչի միշտ, քանի դեռ մարդը զգում է ապրելու ճշմարիտ ուղիների կորստյան վտանգը և փորձում է կանխել իր իսկ էության մեջ նստվածքներ տվող երևույթը:

Գնահատման չափանիշներ

12-րդ դասարան

1 հարց՝ Ենթահարցեր՝	1-2 մ.,	2-3 մ.,	3-5 մ.,		
2 հարց՝ Ենթահարցեր՝	1-1 մ.,	2-3 մ.,	3-6 մ.,		
3 հարց՝ Ենթահարցեր՝	1-2 մ.,	2-2 մ.,	3-6 մ.,		
4 հարց՝ Ենթահարցեր՝	1-2 մ.,	2-3 մ.,	3-2մ.,	4-1 մ.,	5-3 մ.:

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան